ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1918 ԵՎ 1921թթ.

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

1917 թ. դեկտեմբերի վերջին և 1918 թ. սկզբին, ոգևորված Անդրկովկասից ռուսական բանակի հեռանալու հանգամանքից, թուրքական հրամանատարությունն սկսեց ակտիվորեն նախապատրաստվել հարձակման: Թուրքերի դդմամբ աշխուժացան Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականները՝ «մեսխեթցիները»: Նրանք հարձակվեցին Ախալցխա քաղաքի վրա, որի հայ և վրացի բնակչության հերոսական ինքնապաշտպանությունը գլխավորեց երիտասարդ գործիչ, քաղաքագլուխ Զորի Զորյանը:

1917թ. վերջին ձևավորվեց Ախալքալաքի Ազգային խորհուրդը, որի ղեկավարությունը ստանձնեց քաղաքագլուխ Մկրտիչ Մարգարյանը: Խորհուրդը ստեղծեց գավառի պաշտպանության ժամանակավոր կոմիտե, որը որոշ աշխատանք կատարեց ակտիվացած մեսխեթցիների սանձարձակությունները զսպելու ուղղությամբ: Ի դեպ, այդ գործում ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Ախալցխայի գավառներում հայերն ու վրացիները գործում էին միասնաբար: 1918թ. փետրվար-մարտին Ախալքալաքի գավառի հարավ-արևմտյան մասում՝ Հոկամ, Խավեթ, Էրինջա գյուղերի թուրքերի դեմ հաջողությամբ համատեղ պայքար էին մղում հայկական Գումբուրդո, Կարծախ, Սուլդա, Վաչիան և Կուր գետի ձորում ընկած՝ վրացական գյուղերի բնակիչները: Ախալքալաքի գավառում ձևավորված հայկական ջոկատները կարողացան չեզոքացնել տեղի թուրք-մեսխեթցիների ավազակային գործողությունները և նրանց դուրս մղել մի քանի գյուղերից: Թուրքերի մի զգալի մասը, հիմնականում Կոկիա գյուղի բնակիչներ, փախուստի դիմեց դեպի Արդահան, որտեղ, գրգռելով տեղի մահմեդականներին հայերի դեմ, սադրեցին հայկական կոտորածներ: Երկու հազար արդահանցի կանայք, երեխաներ ու ծերեր, մազապուրծ հասան Ախալքալաքի գավառ, ուր նրանց տրամադրվեց օթևան: Արդահանցի գաղթականների ողբալի վիճակը, թուրքերի կողմից նրանց հարազատների նկատմամբ վայրագությունների մասին լուրերը ջավախքցի երիտասարդներին մղեցին վրիժառության անխոհեմ քայլերի: Տեղի դաշնակցական ու էսէռական մի քանի գործիչների առաջնորդությամբ նրանք բռնություններ կատարեցին տեղի

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

թուրքերի, այդ թվում՝ Խոսալիա գյուղի բնակիչ, մահմեդականների շրջանում մեծ հեղինակություն վայելող կալվածատեր Դալալեանդովների ընկատմամբ: Գավառում քրիստոնյա-մահմեդական փոխհարաբերությունները ծայր աստիճան սրվեցին: Տեղական իշխանությունները, Անդրկովկասյան սեյմը, Հայոց և Վրաց ազգային խորհուրդները գործնական քայլեր չկատարեցին Ախալքալաքի և Ախալցխայի գավառներում ազգամիջյան լարվածության թուլացման ուղղությամբ, որն այնքան անհրաժեշտ էր թուրքական զորքերի ներխուժման նախօրյակին: Սեյմը միայն տարբեր ազգերի ներկայացուցիչներից կազմված մի քննիչ հանձնաժողով ուղարկեց տարածաշրջան: Վերջինս էլ ոչ մի շոշափելի արդյունքի չհասավ:

1918 թ. մարտ-ապրիլին Վեհիբ փաշայի զորքերի հարձակումից և հատկապես Կարսի մարզի գրավումից հետո, Ախալքալաքի վիճակը խիստ ծանրացավ: Թուրքերի կողմից բռնագրավված տարածքներից նորանոր հայ գաղթականներ հաստատվեցին այստեղ: Ախալքալաքցիները կարողացան բանակցություններ մեջ մտնել թուրքական զինվորականության և Արդահանի մահմեդականների ներկայացուցիչների հետ և Արդահանի ու Օլթիի գավառների 1500 հայ բնակիչների՝ հիմնականում կանանց ու երեխաների, փոխանակել իրենց գավառի Կոկիա, Թոք և թուրքական այլ գյուղերի բնակիչների հետ:[1] Վերոհիշյալ դեպքերից հետո, օրեցօր առաջացող օսմանյան զորքերի օգտին Ախալցխայի ու Ախալքալաքի մահմեդականների լրտեսական գործունեությունը նոր աշխուժացում ապրեց:

Հենվելով տեղերում ձևավորված ռազմական, ազգային ու քաղաքացիական մարմինների վրա՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, հակառակ Վրաց ազգային խորհրդի ձգտումներին, կարողացավ վիճելի համարվող Ախալքալաքի և Բորչալուի գավառների վրա տարածել իր ազդեցությունը: Շուտով Ախալքալաք ուղարկվեց գնդապետ Առաքելովը, տեղում սկսվեց հայկական կորպուսի առանձին գնդի կազմավորման գործը: Ցավոք, ի տարբերություն Ախալցխայի, Ախալքալաքից հեռացած ռուսական կայազորն իր հետ տարել էր զինամթերքի մեծ մասը: Ուստի հնարավոր եղավ զինել գնդին զինվորագրվել ցանկացող 5 հազար երիտասարդներից միայն 2 հազարին:

1918 թ. մարտի վերջին Հայոց ազգային խորհուրդը որոշեց դիմել Ալեքսանդրապոլում գտնվող զորավար Անդրանիկի օգնությանը, որը ձեռնամուխ էր եղել նոր զորամասերի կազմավորման գործին: Վերջինս փորձեց իրականացնել այդ խնդիրը: Նա թեև անձանոթ էր Ջավախքին, սակայն տասնամյակներ շարունակ Արևմտյան Հայաստանում կռվել էր ախալքալաքցի ֆիդայիների հետ, սերտ շփումներ ունեցել ծնունդով ախալքալաքցի հայտնի գործիչներ Ռուբեն Տեր-Մինասյանի, Համո Օհանջանյանի, Ռուբեն Դարբինյանի և այլոց հետ, ուստի չէր կարող անտարբեր մնալ ջավախքցիների ճակատագրի նկատմամբ, առավել ևս, որ պաշտպանության տակ վերցնելով Ալեքսանդրապոլ-Ախալքալաք գիծը, կամրապնդվեր հայկական ուժերի աջ թևը և կփակվեին թուրքական զորքերի ուղիները դեպի Լոռի ու Թիֆլիս: Ապրիլի 11-ին, դուրս գալով Ալեքսանդրապոլից, Հայկական առանձին հարվածող զորամասն ուղղություն վերցրեց դեպի Շիրակի հյուսիսային շրջան և հասավ Թորոս գյուղը: Ղազանչիից հետո Անդրանիկի զորագունդն ընդհուպ մոտեցավ Ախալքալաքի գավառին: Նրա հսկողության տակ հայտնվեց Աշոցքի սարահարթի զգալի մասը՝

Ղազանչի-Շիշքափա (Սեպասար)-Չիֆթլի-Բոզյոխուշալի (Մուսայելյան) շրջատարածքը:[2]

Սակայն շուտով թուրքական ուժերի մի զորաջոկատ Աղբաբայի թուրքերի աջակցությամբ հասավ Ախուրյանի ակունքների շրջանը և անմիջական վտանգ ստեղծեց Աշոցքն ու Ջավախքը կապող ճանապարհի համար: Ստեղծված պայմաններում Անդրանիկը ստիպված եղավ հրաժարվել Ախալքալաք անցնելու մտադրությունից և գաղթականների հետ Կարախաչի դժվարանցանելի լեռնանցքով դուրս եկավ Վորոնցովկա (այժմ՝ Տաշիր):

Շիրակ-Աշոցքի գրավումից հետո թուրքական մի զորաջոկատ հարավից շարժվեց դեպի Ախալքալաքի գավառ: Թշնամին Ջավախք ներխուժեց նաև հարավ-արևմուտքից՝ Չլդրի կողմից, 1918 թ. մայիսի 7-ին (20): Ախուրյան գետն անցնելու, Ախալցխա ու Ախալքալաք ներխուժելու թուրքերի հանդուգն ու ինքնագլուխ քայլը խիստ դժգոհություն առաջացրեց անգամ Թուրքիայի դաշնակիցների շրջանում: Մայիսի 15-ին գեներալ ֆոն Լոսովը Բեռլին՝ արտաքին գործոց նախարարությանը, գրում էր. «Մաքուր հայկական մարզեր Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Երևանի նկատմամբ թուրքերի չափից դուրս պահանջները ցույց են տալիս, որ նրանք ձգտում են գրավել Բրեստի պայմանագրով չնախատեսված մարզեր, շահագործել Կովկասը և իրականացնել հայերի լրիվ ոչնչացումն Անդրկովկասում»:[3]

Ախալքալաքում տեղի բնակչությունից կազմավորված փոքրաթիվ ու վատ զինված ջոկատները Կարծախի մոտ՝ Գյոք Դաղ լեռան շրջանում կարողացան կազմակերպել կարճատև դիմադրություն: Գնդապետ Առաքելովը ճակատ մեկնելու փոխարեն, շարունակում էր ինքնապաշտպանական ուժերի գործողությունները «ղեկավարել» Ախալքալաքից՝ 25-30 կմ հեռավորությունից: Շնորհիվ ռուսական բանակից զորացրված զինվորականներ Լյուդվիգ Դեմիրճյանի, Խորեն Մնոյանի, Զարմայր Խանոյանի, Թիֆլիսից ժամանած Պողոս Աբելյանի, ռուս սպա Ռեզնիկովի խմբերի մղած պաշտպանական ծանր մարտերի, հնարավոր եղավ ապահովել գավառի բնակչության մի մասի արտագաղթը:[4] Վրաց ազգային խորհրդի ենթակայության տակ գտնվող վրացական զորաջոկատն առանց մարտի մեջ մտնելու թողեց ռազմաճակատի գիծը:

Գավառի հյուսիսային գյուղերի բնակչությունը՝ մոտ 40 հազ. մարդ, գաղթեց դեպի Բակուրիան, իսկ հարավայինը՝ 30-35 հազ մարդ, հիմնականում դեպի Ծալկա՝ տեղում թողնելով իր ամբողջ անշարժ գույքը: Չհաջողվեց գավառից դուրս բերել անգամ հարյուր հազարավոր փութ ալյուրը և մինչև 10 մլն. փութ հացահատիկի բերքը:[5]

Այդ օրերին «Հորիզոն» թերթում Արսեն քահանա Բլրցյանը գրում էր. «Թուրքերի թնդանոթների և գնդացիրների տարափի տակ, փախստականները չկարողացան իրենց ունեցած ինչքից որևէ բան վերցնել իրենց հետ և ամեն բան թողին գյուղերում: Շատ հայերի գերել են թուրքերը»:[6] Չգաղթեցին միայն թրքախոս հայ կաթոլիկներն ու ռուս դուխոբորները: Այսպես, մինչև մայիսի վերջը, արտագաղթեց ամբողջ Ախալքալաք քաղաքի և 61 հայկական գյուղերի բնակչությունը:

Գավառ ներխուժած թուրք ասկյարներն ու տեղի մեսխեթցիները թալանեցին գյուղերն ու սրի քաշեցին տեղում մնացած բնակչության մի մասին: Գերի վերցված բնակչության մյուս մասից էլ առանձնացվեցին

աշխատունակ հարյուրավոր տղամարդիկ և աքսորվեցին Թուրքիա, իսկ ավելի քան հազար ծեր տղամարդկանց ու կանանց աքսորեցին Բակուրիանա՝ գաղթականների ճամբար: Ահավոր աղետի ենթարկվեցին Խորենիա և Թախչա գյուղերի բնակիչները: Ծալկա անցնելու ճանապարհին, Աբուլ լեռան ստորոտին, մի քանի թուրք լրտեսների հաջողվեց անվտանգության երաշխիքների կեղծ խոստումներով համոզել խորենիացիների մեծ մասին՝ 800 մարդու, վերադառնալ գյուղ: Ապա նրանք և Թախչա գյուղի 300 բնակիչ, թուրք ասկյարների կողմից արգելափակվելով մարագներում, վայրագորեն ոչնչացվեցին:[7]

Թուրքական հրոսակները ապանդ կազմակերպեցին նաև Մեծ Արագյալ, Գումբուրդո, Աբուլ, Բեժանո գյուղերում, Ախալքալաք քաղաքում և այլուր: Կոտորածն ավելի մեծ մասշտաբներ կընդուներ, եթե բնակչությունը տեղ-տեղ չդիմեր ինքնապաշտպանության: Թշնամին հատկապես համառ դիմադրություն հանդիպեց Սաթխա գյուղի մատույցներում:[8] Զավսիքցիների դիմադրությունը կոտրելու համար թուրքերին հարկ եղավ Վրոնցովկայում տեղակայված Կովկասյան 9-րդ հրաձգային գնդի կազմից նոր ուժեր տեղափոխել Ախալքալաքի գավառ:

Բորժոմի շրջանում տեղակայված վրացական զորքերի հրամանատար գեներալ Արջևանիձեն ոչ միայն ռազմական ու նյութական օգնություն ցույց չտվեց հայ բնակչությանը, այլև զինաթափեց գաղթականների վերջին խմբերին ուղեկցելուց հետո, հունիսի 5-ին գավառից դուրս եկած հայ կամավորներին: Ավելին՝ ստանալով Վրաց ազգային խորհրդի կարգադրությունը, նա ախալքալաքցի փախստականներին արգելեց տեղավորվել Բակուրիան ավանում, նրանից հյուսիս, հյուսիս-արևմուտք և Վրաստանի այլ շրջաններում: Զանազան արգելքներ հաղթահարած այն գաղթականները, որոնք հասել էին Թիֆլիս, Նավթլուղ կայարանում շրջապատվեցին վրացական զորքի կողմից և բռնությամբ վերադարձվեցին Ծալկայի շրջանում և Բակուրիանի անտառներում ծվարած մյուս գաղթականների մոտ: Վրաստանի խորքերը տեղափոխվելու արտոնություն ստացան միայն վրացի գաղթականները:[9] Հյուսիսային Կովկաս, հիմնականում՝ Վլադիկավկազ անցած գաղթականների առջև փակվեցին Վրաստան տեղափոխվելու ճանապարհները:

Գավառի գրավումից հետո թուրքական զինվորական հրամանատարությունը հանդես եկավ Ախալքալաքը Անդրկովկասում ստեղծված «Հարավ-արևմտյան թուրքական հանրապետության» մաս ճանաչելու հայտարարությամբ: Գավառի ժամանակավոր կառավարիչ նշանակվեց Խոսպիա գյուղից կալվածատեր Յասոն բեկը: Սկսվեց կիսաամայացած ու հայաթափված գավառի ավելի քան վեցամսյա թուրքական տիրապետության մի ծանր ժամանակաշրջան: Թուրքերն սկսեցին բնակավայրերից դուրս բերել տեղում թողնված շարժական գույքը, հայերից ու վրացիներից դատարկված գյուղերը բնակեցնել մահմեդականներով:

Ախալքալաքցի գաղթականների վիճակը շարունակում էր վատթարանալ: Նրանք փաստորեն հայտնվել էին յուրատեսակ արգելափակոցում: Դեպի հյուսիս՝ Բակուրիանի ու Բորժոմի բնակավայրերի ճանապարհը փակել էր վրացական զորքը, իսկ ետդարձի ուղին դեպի գավառ՝ թուրքերը:

1918 թ. հուլիսի սկզբին վրաց կառավարությունը մերժեց Հայոց ազգային խորհրդի միջնորդությունները՝ գաղթականներին Վրաստանի խորքերը տեղափոխելու, ինչպես և Բորչալուից հեռացած մահմեդականնե-

րի բնակավայրերում տեղավորելու իրավունք արտոնելու մասին, իր այդ տմարդի քայլը «բացատրելով» համաճարակների տարածումը Վրաստանում կանխելու պատճառաբանությամբ:[10] Վրաց ազգայնական մամուլը ոչ միայն պաշտպանեց իր կառավարության այդ որոշումը, այլև փորձեց Հայոց ազգային խորհրդին, հատկապես նրա դաշնակցական անդամներին մեղադրել վրաց ժողովրդի դեմ նյութած դավերի մեջ: «Էրթոբա» թերթն իր հուլիսի 19-ի համարում այն միտքն էր հայտնում, թե դաշնակցականները, որ արդեն թշնամացրել են հայերին թաթարների դեմ, այժմ էլ ուզում են հայ գաղթականությանը Վրաստան մուտք գործելու հնարավորություն տալով, զանազան համաճարակային հիվանդություններ տարածել վրաց ժողովրդի մեջ:[11] Այս ամենը հնարանք էր: Նախ՝ հունիս-հուլիս ամիսներին գաղթականների մեջ դեռ համաճարակային հիվանդություններ չկային: Դրանք հայտնվեցին ավելի ուշ՝ աշնանը: Այդ պատճառաբանության հիմնավորված լինելու հանգամանքն անգամ չէր կարող վրաց իշխանություններին ազատել ախալքալաքցի փախստականների՝ իրենց քաղաքացիների ճակատագրով մտահոգվելու պարտականությունից: Մինչդեռ, այդ «պարտականության» փոխարեն, գեներալ Արջևանիձեի վերջին ջոկատները հեռացան Ախալքալաքի գավառի հյուսիսային սահմանագծից՝ թուրքական հրոսակներին ու տեղական ավազակախմբերին հնարավորություն ընձեռելով մշտական հարձակումներով նորանոր վնասներ հասցնելու գաղթականներին: Այդ հարձակումների ընթացքում թուրքերը Բակուրիանի գաղթականական ճամբարից առևանգեցին կամ սպանեցին մեծ թվով մարդկանց: Միաժամանակ Թելավի, Սիգնախի, Սուրամի և այլ շրջանների իշխանությունները դրդեցին տեղի վրաց բնակչությանը հանդես գալ հայ գաղթականներին իրենց բնակավայրերից վտարելու պահանջով:[12] Հայոց ազգային խորհրդի աջակցությամբ թիֆլիսաբնակ ջավախքցիներից կազմակերպվեց «Ախալքալաքի Հայրենյաց (Հայրենակցական - Ա.Մ.) միությունը», որի վարչության մեջ մտան 10 հոգի, այդ թվում ճանաչված հասարակական գործիչներ Պողոս Աբելյանը (քարտուղար), Բ. Օհանջանյանը (նախագահ), Գր. Պապոյանը (տեղակալ), Հովհաննես Մալխասյանը, Ջալալ Տեր-Գրիգորյանը, Կարապետ Շահպարոնյանը: Վարչությունը կոչով դիմեց Թիֆլիսի հայությանը և կարողացավ որոշակի միջոցներ հանգանակել գաղթականների համար: Ախալցխա ժամանած ախալքալաքցի գաղթականների պատվիրակության՝ թուրքական հրամանատարությանը ներկայացրած խնդրանքը՝ իրենց հայրենի գավառ վերադառնալու թույլտվություն ստանալու վերաբերյալ, կտրականապես մերժվեց: Թուրքերը, չթաքցնելով Ախալքալաքի գավառը կայսրությանը վերադարձնելու իրենց պլանները, հայտնեցին, որ հայկական գյուղերն արդեն բնակեցված են Թուրքիայից բերված մահմեդական վերաբնակիչներով: Ուշագրավ է, որ Ախալքալաքը հայաթափելու և այն Թուրքիային բռնակցելու իրենց հայակուլ ծրագրերում երիտթուրքերն այնքան հետևողական էին, որ ախալքալաքցի գաղթականներին հայրենի գավառ վերադառնալու խնդրում անորդվելի մնացին ոչ միայն հայկական տարբեր կազմակերպությունների, օտարերկրյա բարեգործական հաստատությունների, այլև դաշնակից Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Կրեսի միջնորդությունների նկատմամբ:[13]

Այսպիսով՝ և՛ վրաց կառավարության, և՛ թուրքական հրամանատարության կողմից որևէ ուղղությամբ տեղաշարժվելու իրավունքից զրկված

ջավախքցի գաղթականները դատապարտվում էին բնաջնջման: Օգոստոս ամսին, երբ դեռ չէին սկսվել ցրտերը, արդեն գաղթականների շրջանում օրական մահանում էր մինչև 100 մարդ:[14] Խոսելով վրացական իշխանությունների նման անմարդկային վերաբերմունքի մասին, Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը ցավով նշում էր. «Այս տխուր փաստը հիշատակում ենք ոչ թե մեր ահռելի կորուստների կսկիծը վերարծարծելու համար, այլ որպեսզի ցույց տանք, որ Ժորդանիան և իր ընկերները... Ախալքալակի և Հայկական Բորչալուի հայ բնակիչներին հանրապետության քաղաքացի չէին նկատում, այլ անցանկալի եկվորներ, որոնց մասին հոգալը իրենց պարտականությունը չէին համարում»:[15]

Ի պատասխան սեպտեմբերին և հոկտեմբերի սկզբին Հայաստանի կառավարության, Ախալքալաքի Հայրենյաց վարչության (միության) նորանոր բողոք-դիմումներին՝ կամ Վրաստան անցնելու, կամ Ախալքալաք վերադառնալու թույլտվության արտոնման մասին, հոկտեմբերի 4-ին վրացական կառավարության գրասենյակի պետ Կոժուխովը Հայոց գլխավոր գաղթականական խորհրդին պաշտոնական գրությամբ պատասխանեց. քանի որ Վրաստանում ստեղծվել է պարենային ճգնաժամ, իսկ թուրքական հրամանատարությունը հրաժարվում է թույլ տալ Ախալքալաքի հայությանը վերադառնալ հայրենիք, վրաց իշխանություններն առաջարկում են ամենակարճ ժամանակամիջոցում գաղթականությանը տեղափոխել Հյուսիսային Կովկաս կամ Հայաստանի Հանրապետություն:

Գաղթականական խորհրդի նախագահ, Հայ ժողովրդական կուսակցության ղեկավար Սամսոն Հարությունյանի նախաձեռնությամբ հրավիրվեց շտապ խորհրդակցություն, որին մասնակցեցին նաև Վիրահայոց ազգային խորհրդի նախագահության անդամները: Ախալքալաքցիների կողմից նիստին հրավիրված Պողոս Աբելյանը հայտնեց, որ ինքը թուրքական առաքելության նախագահ Աբդուլ Քերիմից տեղեկացել է, որ թուրքերը հեռանալու են Ախալքալաքից և դեմ չեն հայերի վերադարձին գավառ, առավել ևս, որ Կ. Պոլսում հայոց պատվիրակությունը (նախագահ Ավ. Ահարոնյան) իր կառավարության հետ այդ հարցում ձեռք է բերել համաձայնություն: Կոժուխովից պահանջվեց թուրքական մերժման պատճենը: Պատասխան չստացվեց: Ակնհայտ դարձավ, որ Վրաստանի կառավարությունը, մեղքը բարդելով թուրքերի վրա, չէր կամենում թույլատրել հայերի վերադարձը: Եվ իրոք, շուտով թուրքական հրամանատարությունը պաշտոնապես հայտարարեց, որ մինչև իրենց զորքերի դուրսբերումը, որի համար ժամկետ էր սահմանված մինչև դեկտեմբերի 4-ը, ախալքալաքցի գաղթականներին թույլատրվում է վերադառնալ իրենց բնակավայրերը: Պարզ էր, որ այսպիսի եղանակներով, արհեստականորեն հրահրվում էր գաղթականության սովահարությունը:[16]

Գաղթականության վիճակը դառնում էր օրհասական. սկսվել էին ցրտերը, անձրևները, սպառվում էր անասնագլխաքանակը: Վրացական իշխանությունները Քութայիսից, Գորիից, Բորժոմից եկած հարյուրավոր ավազակների ու սպեկուլյանտների թույլատրեցին չնչին գներով գաղթականներից գնել, առանձին դեպքերում էլ՝ վրացական միլիցիայի օգնությամբ խլել տասնյակ հազարավոր գլուխ անասուններ: Այս հատուկ քաղաքականության շնորհիվ Վրաստանի կառավարությունը լուծեց իր բնակչության պարենային խնդիրները:

Գաղթականության հոգսերի ողջ ծանրությունը մնաց Հայոց գաղթականական խորհրդի, Ախալքալաքի Հայրենյաց վարչության, Կովկասի հայոց բարեգործական ընկերության, Վրաստանում Ամերիկյան առաքելության, մասամբ նաև՝ Վիրահայոց Ազգային խորհրդի, Հայաստանի ներկայացուցիչ Ա. Ջամալյանի վրա: Հայաստանի անունից Ազգային խորհուրդը նշանակեց մշտական ներկայացուցիչներ՝ Արշակ Թորոսյանին Բակուրիանում, Արարատ Տեր-Գրիգորյանին՝ Ծալկայում:[17] Գաղթականներն իրենց կողմից լիազոր նշանակեցին Մեսրոպ քահանա Մելեյանին: Ինչպես վերջինս, այնպես էլ հայկական և ամերիկյան զանազան կազմակերպություններ, անհատներ որոշակի աշխատանք կատարեցին գաղթականության օգնելու համար: Սակայն գաղթականության զանգվածն այնքան մեծ էր՝ 80-85 հազ. մարդ, որ կատարված աշխատանքը չէր կարող լինել շոշափելի:

Մինչև 1918թ. դեկտեմբերը բծավոր տիֆն ու խոլերան սկսեցին հնձել գաղթականությանը: Այդ օրերին «Մշակում» տպագրված մի թղթակցությունում Պողոս Աբելյանը գրում էր. «Ախալքալաքցիների բնաջնջումն այնքան աճող է գնում, որ եթե գաղթականներին փրկելու համար ձեռք չառնվեն ժամանակի պահանջած միջոցներ, ախալքալաքցիների այս սերունդը կլինի վերջինը երկրագնդի վրա»:[18]

1918թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուրիանի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազ. մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի և Մանգլիսի շրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստները հասան 40 հազարի:[19]

1918թ. նոյեմբերից, հաղթահարելով վրաց զինվորական իշխանությունների հարուցած զանազան արգելքները, հաճախ շրջանցիկ ճանապարհներով, գաղթականության բեկորներն սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայրերը: Բակուրիանից Ախալքալաք անցնելու թույլտվության դիմաց վրաց զինվորականները գաղթականներից պահանջում էին ստորագրություններ վրացահպատակություն ընդունելու, գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին:[20]

Վերադարձող գաղթականներից կազմված փոքրաթիվ զինված խմբերը, թուրքերի դուրս գալուց հետո, փորձեցին կարգ ու կանոն հաստատել Ախալքալաքում:

Մինչև 1919թ. մարտ ամիսը հայրենի գավառ վերադարձան ախալքալաքցի գաղթականների մնացած բեկորները: Գավառը լիովին թալանված էր, հացահատիկը տարվել էր Թուրքիա: Բարվոք վիճակում էին միայն թրքախոս հայ կաթոլիկների և ռուս դուխոբորների գյուղերը: Ի դեպ, նրանք զգալի օգնություն ցույց տվեցին գաղթականներին ցանքս կազմակերպելու, բնակավայրերը վերականգնելու գործում:

Արդեն հունիսին Հայաստանի կառավարությունը կարողացավ երկաթուղով ստացվող հացահատիկից բաժին հանել ախալքալաքցի սովյալներին: Ստացվող հացահատիկից Ախալքալաքի գավառին բաժին հանելու գործը դրվեց պետական մակարդակի վրա: Թիֆլիսում՝ Հայաստանի ներկայացուցչությունում, ստեղծվեց հատուկ հաստիք խնամատարության գծով, որը զբաղեցրեց Դ. Դավիթխանյանը: Միայն մայիսի սկզբին Հայաստանը Ախալքալաքի սովյալներին հատկացրեց 3 մլն. ռուբլու գումար:[21]

Խիստ պակասել էր անասնագլխաքանակը: Չկային լծկաններ և սերմացու 1919թ. գարնանը ցանքս կազմակերպելու համար: «Եթե ուշանա օգնության գործը, - 1919թ. մարտի վերջին Ախալքալաքից գրում էին «Զանգ» թերթի խմբագրությանը.- Ախալքալակի հայ գյուղերի տեղ մնալը կգտնենք տվամահների գերեզմանոցներ»:[22]

1918թ. վերջին սկսված սառնամանիքների պատճառով թուրքերը չէին կարողացել իրենց հետ տանել գավառում եղած բոլոր անասուններն ու շարժական գույքը: Պողոս Աքելյանը դիմեց Ախալքալաքում գեներալ-նահանգապետ նշանակված Մակաևին՝ խնդրելով այդ մնացած գույքը հանձնել գաղթականությանը: Սակայն Մակաևը մերժեց նրա խնդրանքը: Ցավոք, Վիրահայոց ազգային խորհուրդը, որը հատկապես հայ-վրացական պատերազմի շրջանից դարձել էր շատ անդեմ մի մարմին, չաջակցեց Պ. Աքելյանի և հայրենասեր այլ գործիչների նմանօրինակ ձեռնարկումներին:

Իր անկման նախօրյակին Վրաստանի դեմոկրատական հանրապետության ղեկավարությունը, ինչպես հայտնի է, թուրքերի հետ փորձեց յուրովի «լուծել» Ջավախքի հիմնահարցը: 1921թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին Ախալքալաքի գավառը ենթարկվեց նոր սրհավիրքի՝ քեմալական թուրքերի հարձակմանը: Ներխուժելով Ջավախք՝ թուրքերը, փաստորեն, խախտում էին թուրք-վրացական զաղտնի համաձայնագիրը Վրաստանի տարածք (որպիսին այդ ժամանակ համարվում էր Ախալքալաքը) չմտնելու վերաբերյալ: Բայց հիմքեր կան ենթադրելու, որ անկախ Վրաստանի կառավարությունն իր գոյության վերջին օրերին, քաղաքական նկատառումներով, թուրքերին Ախալքալաքի գավառ մտնելու արտոնություն էր տվել՝ նախապես նորից զինաթափելով հայ բնակչությանը:[23]

Թուրքաբնակ Հոկամ գյուղի մոլլա Բայրամի և Ջամալ աղայի ոտեկցությամբ Ղումանտար փաշայի զորքն ու թուրքական խուժանը շարժվեցին գավառի հարավային գյուղերի՝ Կարծախի, Սուլդայի, Դադեշի և Գումբուրդոյի վրա: Բազմաթիվ զումբուրդոցիներ, այդ թվում՝ կանայք, ընկան անհավասար մարտում: Թուրքերը Գումբուրդոյում գերի վերցրեցին հարյուրավոր տղամարդկանց, մի մասին սպանեցին Կուրի ձորում, մյուսներին, լցնելով ջրհորները, խեղդամահ արեցին: Կոտորածներ եղան նաև գավառի այլ գյուղերում: Այս անգամ գավառի բնակչությունը չգաղթեց: Թուրքերը հանդիպեցին համառ դիմադրության Ալաստան, Մոլիտ, Տաբաձղուրի և այլ գյուղերի մատույցներում:[24]

1918 և 1921թթ. թուրքական արշավանքների, սովի ու համաճարակների հետևանքով Ախալքալաքի գավառը կորցրեց իր հայ բնակչության 42-45 %-ը: Օրինակ՝ եթե Ախալքալաք քաղաքը 1917թ. ուներ 5070, ապա 1922թ.՝ միայն 2737 բնակիչ:[25] Նույն վիճակն էր նաև գավառի մյուս բնակավայրերում:

1918-1921թթ. Ախալքալաքի գավառում վերոհիշյալ ժողովրդագրական գործընթացներն իրենց զգացնել տվեցին դեռ երկար ժամանակ: Պատահական չէ, որ խորհրդային իշխանության տարիներին բնակչության որոշակի աճի պայմաններում անգամ, միայն 1960-ական թվականներին Ջավախքի (Ախալքալաքի և Բոգդանովկա-Նինոծմինդայի շրջաններ) բնակչության թիվը հասավ 1917թ. մակարդակին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] ՀՀ Նարագույն պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՆՊԿՊԱ), ֆ. 114, g.2, թ. 125ա-126 և «Մշակ», 1918, թիվ 81:

[2] Աղայան Ծ. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, էջ 598-599: *Այդ օրերին Ջավախքում արդեն համառորեն խոսում էին Անդրանիկի գալստյան մասին:*

[3] Из истории иностранной интервенции в Армении в 1918 г. Документы, Ереван, 1970, с. 116, Հարությունյան Ա. Հ. Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. և ինքնապաշտպանական կռիվները, Եր., 1984, էջ 171:

[4] *Թուրքերը, առաջին անգամ Ախալքալաքի գավառ ներխուժելուց մի քանի օր հետո, ձևացրին, թե դուրս են գալիս այնտեղից: Գաղթականների մի մասը հավատաց դրան և ետ վերադարձավ: Մայիսի երկրորդ կեսին թուրքերը նորից մտան Ախալքալաք և կարողացան տիրել գաղթականների ետ թերած գույքի մի մասին, գերել ու ոչնչացնել հազարավոր մարդկանց:*

[5] ՀՀ Պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՊԿՊԱ), ֆ. 200, g. 1, գ. 17, թ. 34:

[6] Արսեն քահանա Բլրցյան. Ախալքալաքի գաղթականությունը, Հորիզոն, 27 հունիս, 1918, թիվ 125:

[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, g. 1, գ. 17, թ. 34-35 և ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ (այսուհետև՝ ՀՀԳԱԱ ՊԻԱ), Լեոյի անձնական ֆ. 1, g. 1, գ. 242, թ. 5: Խորենիա գյուղի բնակչության կոտորածի մասին տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետություն», 1998, 27 հունիս, էջ 7:

[8] Սաթխայի ինքնապաշտպանության մասին մանրամասն տե՛ս Սանոսյան Ա. Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը, Եր., 1992:

[9] ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն., ֆ. 1, g. 1, գ. 264, թ. 1-2 և ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g. 2, գ. 3, թ. 127ա:

[10] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g. 2, գ.3, թ. 127-127ա:

[11] «Էրթոբա», 19 հուլիս, 1918 և «Հայրենիք», սեպտեմբեր, 1928, էջ 123:

[12] «Հայրենիք», նույն տեղում:

[13] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913—1919), сборник (составитель, отв. ред., автор предисловия Микаелян В.), Ер., 1995, с. 560—561.

[14] «Հորիզոն», 30 օգոստոս, 1918:

[15] «Հայրենիք», ապրիլ, 1928, էջ 90:

[16] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g. 2, գ. 3, թ. 131-131ա:

[17] *Այս անձնավորություններն ապաշնորհ գտնվեցին իրենց աշխատանքում և յուրացրեցին գաղթականների համար նախատեսված օգնության մի մասը (տե՛ս նույն տեղում, թ. 130):*

[18] «Մշակ», 1919, թիվ 14:

[19] ՀՀ ԳԱԱ ՊԻԱ, Լեոյի անձն. ֆ. 1, g. 1, գ. 264, թ. 1-2:

[20] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g. 2, գ. 3, թ. 131ա:

[21] Վրացյան Ս. Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 266: 1919-1920 թթ.: *Ախալքալաքի հայ և վրաց գաղթականությունը Ամերիկյան օգնության կոմիտեից ստացավ զգալի քանակությամբ հագուստ և 250 հազ. փութ սպիտակ ալյուր* (տե՛ս ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ.114, g.2, գ.3, թ. 132):

[22] «Զանգ», 30 մարտ, 1919, թիվ 36:

[23] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 114, g. 2, գ. 3, թ. 132: *Ջավախքի հարցում վրացիների գործելակերպը պատկերավոր է ներկայացված ժամանակի փաստաթղթերում. «Վրաց կառավարությունը իր օրով մեզ նեղում էր ըստ ամենայնի, - կարդում ենք Թիֆլիսում*

Հայաստանի ներկայացուցչին գրած ջավախքցի մի խումբ մտավորականների նամակում, - բացի այդ, երբ երկիրը իրենց էր մնում, գալիս տիրում էին, իսկ երբ թուրքն էր գալիս, հանձնում էին նրան ու հեռանում...» (տե՛ս ՀՀ ԱԴԿՊԱ, ֆ. 114, գ. 2, գ. 46, թ. 65-66):

[24] Մելքոնյան Ա. Ջավախքի զողզոթան, «Ազատամարտ», 24 ապրիլի, 1992, էջ 12:

[25] Նույն տեղում:

Резюме

Армянские погромы в Ахалкалакском уезде в 1918 и 1920 гг.

Ашот Мелконян

Завоевав Западную Армению и Карскую область в мае 1918 г. турецкие войска вторглись в Ахалкалакский уезд. Грузинские военные формирования почти без сопротивления оставили уезд. После упорной самообороны население было вынуждено покинуть родной край и переселиться в Бакурианские леса и в Цалку. В результате турецких набегов, голода, эпидемий 35 тысяч ахалкалакских беженцев, из 80 тысяч человек, погибло.

Только в ноябре – декабре 1918г. беженцам удалось вернуться в ограбленный и обезлюденный турками уезд.

Ахалкалакские армяне подверглись новым погромам в марте 1921г. в результате нашествия кемальских турков.

Summary

Armenian Massacres in Akhalkalak District in 1918 and 1920.

Ashot Melkonyan

Having conquered Western Armenia and the Kars region in May, 1918 the Turkish troops invaded the Akhalkalak district. Georgian military forces left the district almost without any opposition. After determined self-defence the population was forced to leave the native land moving to the Bakurian forests and Tsalka. In the result of Turkish raids, hunger and epidemics out of 80.000 people 35.000 akhalkalakian refugees were killed.

Only in November and December, 1918 the refugees were able to return to the district plundered and deserted by Turks.

In May, 1921 the Armenians of Akhalkalak underwent new massacres as a result of the invasion by Kemalian Turks.